ԱԿԱՆՋԴ ԲԵՐ՝ ԱՍԵՄ...



ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
(1924–1971)

Ծնվել է Արարատի շրջանի Չանախչի (ներկայիս Զանգակատուն, Արարատի մարզ) գյուղում: Պարույրը իր ծնողների երկրորդ զավակն էր, սակայն առաջնեկի՝ փոքր տարիքում մահանալուց հետո նա դառնում է ընտանիքի միակ երեխան: Գրել ու կարդալ սկսել է հինգ տարեկանից: Նույն տարիքից էլ Պարույրը սկսում է հաճախել դպրոց, սակայն սկզբում (տարիքը թույլ չէր տալիս օրինական հաճախել դպրոց) նրա հաճախումները ոչ օրինական բնույթ էին կրում: Նրա գերազանց առաջադիմությունը տեսնելով՝ ուսուցիչը թույլատրում է օրինական կարգով գրանցվել դպրոցում և շարունակել ուսումը: Պարույրը մանկական հասակից շատ էր կարդում, իսկ տասնմեկ տարեկանում առաջին անգամ իր գրիչն է փորձում պոեզիայում: 1940 թ. դպրոցը գերազանց առաջադիմությամբ ավարտելով՝ ընդունվում է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետ: Եղել է ամենալավ ուսանողներից մեկը: «Սովետական գրականություն» ամսագրում տպագրվում են նրա երեք բանաստեղծությունները՝ «Պարույր Սևակ» ստորագրությամբ:

1955 թ. Սևակը ավարտում է Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտը, որտեղ և դասախոսում է կյանքի հետագա չորս տարիներին: 1970 թ. Պարույրը ստանում է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1963-ից մինչև 1971 թթ. աշխատում է որպես ավագ գիտաշխատող Հայաստանի ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, 1966-ից եղել է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարը: Սևակը 1971 թվականի հունիսի 17-ին ավտովթարի զոհ է դարձել: Հուղարկավորված է հայրենի գյուղում: